

ի միջին կողմն գրութեանն (որ երկծալ « մանութիւն նորին Սպաներէն լեզուաւ » է) զոյ հետեւեալ Անգղիերէն մակագրու... « ուղղեալ առ թագաւորն. թուեալ ի 4 թիւն: — « Գրութիւն ի Մարկոս Ռոզաղոէ՛ » « Յունուարի՛ », 1664, և պատահապէս « Քաղաքապետ Միլափուռայ (և թարգ... « ստացեալ Յուլիսին, 1664 » :
(Շարունակելի) Գ. ՏԵՐ Մ. ԳՐԻՆՅԵԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

Յ Ո Ր Ե Ն Ի Ե Ր Գ Ե Ր

ԱՌՈՋԻՆ ՄԵԱԿԱԿԱՍ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Բ

ՍՈՎՐԵՑՈՒՐ ԻՆՃ, ո՛վ Մուսա խարտիշահեր և ժպտուն,
ինչպէ՛ս խոփերն արօրի կը ճմլեն ծոցն հողերուն,

Երբ արագիլն երդիքէն հայրենական զիւղակին
կը մեկնի տաք երկիրներ վերադարձով հրճուազին,

Երբ այգիէն ուր հնչեց կեանքին ծիծաղն հեշտալուր,
կու գան հովուի մը սրինգին եղանակները տրիտուր...

Մովրեցո՛ւր ինձ աշխատանքն առոյգ և յաղթ եղներուն
Որոնք իրենց լուծին վրայ կը կրեն ոսկին արևուն:

Ինչպէ՛ս մաճկալ պարմանին վարժութիւնով հընաւանդ
կ'ուղղէ ընթացքը խոփին ոյձքերուն մէջ արգաւանդ,

Ու կը բացուին ակօսներ որոնց մէջէն կը ժայթքի
Չմբուխտէ ծոփն հասկերուն, և ապա հունձքը ոսկի...

Մովրեցո՛ւր ինձ, ո՛վ Մուսա, ինչպէ՛ս անդերը կ'ըլլան
Միրանէվառ ծովակներ արևին մէջ կէսօրուան,

Երբ ուռիին շուքին տակ ուր կ'անցնի վտակն արծաթէ,
Մեղամաղձիկ պատանին իր սըրինգին հետ կ'երգէ.

Եւ հին կոճղի մը վըրայ, հեռուն ամսող ճամբուն մօտ,
Ոսկի ծնծղան ճըպուռին կը հնչէ միշտ արևոտ...

Բայց նախ ինծի սովրեցո՛ւր ժամանակն երբ կը ցանեն
Մոցը խաւար հերկերուն ցորենհատիկն ոսկեղէն:

Ինչպէ՛ս առոյգ պարմանին, կամ ծերունին ալեգարդ
Ակօսներէն կ'անցնին լուռ իրիկուններն աստղազարդ,

1. Ընթաց, ըստ Հայերէն բուն ստորագրութեան.
2. Իրօք, բնագրին մէջ, ամաթիւն է և փետրուար:

Եւ իջնող մութն երկինքէն՝ կը տեսայցնէ թափանցիկ
Ըստուերն անոնց մարդկային՝ աստուածօրէն գեղեցիկ...

Ասոնց ամենն ես երգել կ'ուզեմ քնարով դաշտային,
Ես որ ծառան եմ խոնարհ Ապոլոնի տաճարին:

Սովրեցո՛ւր ինձ ջրտուցներն և անձրևները զարնան,
Երբ նշենին կը ծաղկի կապոյտ վարդի մը նրման,

Եւ առաջին սաղարթէն, կամ իր ոստէն ծաղկաւետ
Կ'ընեմ ընծայ մը փառքիդ իմ պարզունակ երգիս հետ...

Սովրեցո՛ւր ինձ, ո՛վ Մուսա, հունձքերն առատ որոնցմով
Կ'երթան սայլերը՝ ոսկի դէզերուն տակ ճոնչելով,

Երբ ճամբուն վրայ գիւղերուն կարծես Արևն է անցեր
Կախարդական հէքեաթի մը ժամանակ ցնծաբեր,

Այնքան հնձօրն է զըւարթ, և աշխատանքը՝ վրսեմ,
Որ դաշտային երգիս մէջ հին աստուածներ կ'երագեմ...

Կալերն ինձի սովրեցո՛ւր երգել սրինգով մ'արծնուած
Վանասուրին իրը ընծայ, գեղեցկօրէն ոսկեմած,

Եւ լուսնկան՝ որուն տակ ցորենը լին մ'է ծըփուն
Ուր կայծքարեր կը շողան ոտքին տակ յաղթ եղներուն.

Ծափն ու ծիծաղն և պարերն որոնցմով դեռ կը ցնծան
Յիշատակներ սրտիս մէջ, երբ տարիներս իմ անցան...

Սովրեցո՛ւր ինձ, ո՛վ Մուսա, երգերն այնքան օրօրուն
Որ կը թովեն աշխատանքը վաստակի օրերուն,

Երբ սրինգին ձայնը կու զայ Զեփիւռին հետ այն բլուրէն
Ուր այգիներն ոսկեզօծ մուշկ ու ծոթոր կը բուրեն,

Եւ կը թրթռան քերթողին ականջներէն փախչելով
Մեղուններու բզզիւններ տպագիտնի թևերով...

Մինչև Աշունը հասնի, աստուածային եղանակ,
Սովրեցո՛ւր ինձ, ով Մուսա, երգել փեթակ առ փեթակ

Ինչպէս խորիսիւր մեղրին կը կազմուի լուսաջինջ.
Գաղանիք որուն բաղդատմամբ երգիս խորհուրդն է ոչինչ:

Քանի որ դուն մասներովդ ինչպէս ջրբումն արշալոյս,
Քնարիս մեղմիկ լարերուն կու տաս աւելնն իմ հոգւոյս...

Վարդերն ինչպէս կը թօշնին ու ծաղիկները բոլոր,
Ինչպէս Արևը կ'անցնի եթերին մէջ հեռաւոր,

Ինչպէս ցորենը հողին ոյժքերէն դուրս կը ժայթքի,
Ասոնց ամէնն ես երգել կ'ուզեմ քնարով մը ոսկի: